զմեծ և զփոքր քարինս , և բացին խրամ մեծ · և մտին անտի 'ի ներքս ։ Լուեալ միաբանաց զձայն դղրդելոյ և թընթալոյ , և տեսեալ զնոսա որք ընթանային այսր և անդր · ձայն բարձեալ աղաղակեցին եւ գոչէին հասանիլ յօգնութիւն ։ Իսկ աւազակաց չփոթեալ ընդ միմեանս չկարացին յափշտակել ինչ , ելին և փախեան անտի ։ Ի լուսանալ առաւօտուն լուաւ զեղեալսն Գրիգոր Պատրիարք՝ եւ ազդ արար դատաւորին , և նորա առեալ ընդ իւր զքաղաքապետն և զբազմութիւն այլազգեաց եկն անդ , ետ չափել ճարտարապետին զխրամն զոր բացեալ էին աւազակքն , և եգիտ զբարձրութիւնն 2 կանգուն , նոյն չափ և զլայնութիւնն ։ Ապա չկարացեալ ասել կամ առնել ինչ , հրաման ետ Գրիգորի շինել և ամրացուցանել զայն ըստ առաջնոյն , և նա արար ըստ հրամանի նորա · 'ի ١٠ Զիլգատէ ամսոյ՝ (1640) · յ8 Փետրվարի ։

Վէճք և դատաստանք և հակառակութիւնք վնասակարք եղեն բազում անգամ ընդդէմ Հայոց վասն այրին Ծնընդեան , զորոց երկարագոյն գրեցաք 'ի նախընթաց գլուխսըդ , ուր յետ կորուսանելոյ Հայոց զայլ իրաւունս՝ միմիայն մնացեալ էին անդ կանթեղք 2 ։ Իսկ 'ի սմին ամի միաբանեալ Յունաց և Լատինաց , բարձին զնոսա եւս , և չկամէին իսկ Հայոց մտանել անդ ։ Իսկ Գրիգոր Պատրիարք որ բազումս վաստակեալ էր վասն այսր , առեալ հրովարտակս և դատաստանական գիրս՝ չեղեւ հնար ընդդէմ դինել նոքօք երկուց ազգաց · մանաւանդ անվերջանալի էր վէճն և խռովութիւնն 'ի Ս . Տեղիս · յորոց կրեցին Հայք տառապանս և վնաս ծանունս ։ Ապա 'ի սմին նուագի առաւել խստանալ երկուց ազգաց ընդդէմ Հայոց , հարկ եղեւ Գրիգորի դիմել առ դատաւորն Մուստաֆա էֆէնտի , և 'ի բողոք բառնալ նմա՝ յանձն առ դատաւորն գրել 'ի Դուռն ըստ մտաց վաւերական գրոցն Հայոց , և զհակառակութիւնս երկուց ազգաց · և խնդրեաց հրովարտակ յԱրքայէ վասն հաստատութեան իրաւանցն Հայոց · ١٠٥٣ (1640) ։

Չեւ եւս աւարտեալ Գրիգորի Պատրիարքի զվէճն որ ընդ Լատինս և ընդ Յոյնս՝ սակս այրին Ծննդեան , յարեաւ այլ իմն խռովութիւն եւ խոչ մեծ առաջի նորա ,